

ՅԵՂԵԿՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ՝

Ով որ ճշտութեամբ կը կատարէ բոլոր իրեն առ Աստուած, առ ինքն և առ ընկերն ունեցած պարտաւորութիւնները, և այն չէ թէ մարդկանցից վառք վաստակելու համար, կամ որպիսի և իցէ ուրիշ մտօք և շահասիրութեամբ, այլ ի մաքուր սիրոյ առ Աստուած՝ և Աստուծոյ հաճոյանալոյ համար՝ կատարելով միշտ նորա կամքը, նա է ճշմարիտ առաքինին: Վերջապահական առաքինութիւնն կը սովորեցնէ մեզ, որ բարեյօժար կամօք կատարեմք Աստուծոյ հրամանները միայն նորա սիրոյն համար: Առաքինութիւնը ըստ ինքեան մարդոյս բարի կամքն է, անկեղծ փափան ու անընդհատ ջանքն ամեն ժամանակ Աստուծոյ կամքը կատարելոյ, իւր սիրտը սուրբ ուղղելոյ և աւելի ևս Աստուծոյ շնորհը վաստակելոյ համար: Սորա համար կաւ առաքեալն Յակոբոս. «Ով որ բոլոր օրէքը պահէ ու մէկ բանի մէջ յանցաւոր գտնուի, նա ամեն օրինաց պարտական կը լինի»:

Եթէ մեր ունիմք հաստատ կամք յաւէտ առաքինի լինելոյ, պարտիմք ցուցանել այս կամքը նաև արտաքին կերպով, այս ինքն՝ բանիւ և գործով, որով ըստ ժամանակին հետութեամբ կ'կարողանամք կատարել մեր բոլոր պարտաւորութիւնները: Աւմիշտ բարիք գործելու այս սովորութենէն կը ծաղին զանազան արտաքին առաքինութիւններ, որպիսիք են՝ ժուժկալութիւն, աշխատասիրութիւն, համբերութիւն, հեղութիւն, խնայողութիւն և այլն:

Մեր ստեղծուած եմք և կապրիմք երկրիս վերայ առաքինի լինելոյ համար, որոյ վասն իսկ մեր Փրկիչ Վերջապահ աշխարհ եկաւ, որպէս զի սովորեցնէ մեզ առաքինութիւնը: Առաքինութիւնը մեր բարձրագոյն նախասահմանութիւնն է և մեր պարտաւոր եմք մինչև մեր կենաց վերջը զիմեւ առ նա, որ ստանանք նորանից յաւիտենական վարձը, ինչպէս որ կասէ Պօղոս առաքեալը. «Չէք զիտեր, ասպարեղին մէջ ամենը կը վազեն, բայց մէկը միայն մրցանակը կառնու. այնպէս վազեցէք, որ հասնիք»: Առաքինութիւնը գեռ երկրի վերայ մեղանում՝ ստեղծումէ խղճի անդորութիւնը, ճշմարիտ դուարձութիւնը բարօրութեան մէջ, մխիթարութիւն՝ անբաղտութեան մէջ, իսկ ապագայ կեանքում՝ յաւիտենական երջանկութիւն: Առաքինութիւնը մէք պարտաւոր եմք նախադասել աշխարհի ամեն բարիքներէն վեր, և երբէք չհեռանալ նորանից:

Առաքինութեան սէրը և աղօթքը պէտք է զարթեցնեն մեզանում հաստատամիտ վստահութիւն այն ժամանակ՝ երբ ծուլութիւնը սկսի թուլացնել մեր դէպ ի բարին զիմելը, երբ խաբուսիկ ցանկութիւնը սկսի ձգել մեզաց մէջ, կամ երբ ցած շահասիրութիւնը շարժէ զմեզ դէպ ի ստախօսութիւն կամ յանիրաւութիւն, երբ առժամանակեայ բաղդաւորութեան և շարունակ ճշմարտասիրութեան մէջ հարկաւոր է առնել ընտրութիւն, երբ արդարութեան ծանապարհը դժուարին լինի մեզ համար կամ բերէ մեր վերայ անաստուածից ծաղրածութիւնը:

Առաքինութիւնը բարեբաղտ կանէ ըզմարդ, վասն զի նորա թոյլատրած ամեն

բաները մեզ վայելելու համար ախորժելի են և անմեղ: Ահ, ինչպէս երջանիկ կանէ զմեզ վառքը երբ զայն արժանաւոր գործոց համար կրնդունիմք: Եյսպէս երկնային առաքինութիւնը կտայ մեզ ախորժելի իշխանութիւն, ըստ որում բարի և երկելի գործեր անելու ընդունակութիւնը կը չորհէ: Նոյն իսկ հարստութիւնը առաքինի մարդոյ ձեռքը գործէր է իրական բազմաւորութեան, քանզի առաքինին կը մեղադրէր ինքզինքը անիրաւաբար զայն վաստակածին համար, և զայն ի գործ կը դնէ բարերարութեան համար: Առաքինութիւնը հնարք կտայ վայելել և զուարճանալ բարերարութեամբ, ըստ որում կը սովորեցնէ մեզ զայն վայելել առանց ուրիշները զրկելու՝ չափաւորութեամբ և ազքատաց բաժին հանելով: Աստուած կ'օրհնէ այն մարդը՝ որ առաքինութիւնը ամեն տեսակ շահասիրութենէ վեր կը նախադասէ: Արքան ճշմարիտ ուրախութիւն կը բոլսի առաքինութիւնը կատարելէն: Արեւել՝ է ինի աւել ուրախալի բան այն մտածմունքէն՝ որով կզգամք թէ ցած կրից յաղթող եղած ենք: Ի՞նչ աւել ախորժելի է այն մտածմունքէն՝ թէ՛ մեք զԱստուած հայր ունիմք մեզ, և աւել բարձր այն զդայմունքէն՝ թէ՛ մեք ի զուր չենք ապրում աշխարհում: Ի՞նչ աւել քաղցր կրնայ լինել այն խղճի ձայնէն՝ որ կը խրախուսէ մեր ընթացքը: Բարեգործութեանց յիշատակէն աւել ի՞նչ ախորժելի կարող է լինել, որով սրբիցիներ թշուառներ ի արտասունքը և վաստակեցանք նոցա շնորհակալութիւնը: Այլ կարող է հանդարտ լինել և ուրախութիւնով նայել այլոց վերայ, կամ ուրախու-

թեամբ մօտենալ իւր մահուան կէտին՝ յուսով սպասել յաւիտենական վարձուց, եթէ ոչ առաքինի մարդը:

Յայտնութիւնը կը սովորեցնէ մեզ հաւատալ զանազան ճշմարտութեանց, որ բարձր են մարդկային մտքից, որուն մեր սահմանափակ միտքը հասնիլ կարող չէ: Աստուծոյ խօսքը կիսխանակէ մեր հետազօտութիւնները, և մեր միտքը պէտք չէ հակառակի այն վիպութեան, թէ Աստուծով մեզ յայտնուած ամեն բանը Աւետարանին մէջ արդարեւ ճշմարտութիւն է:

Մեք տկար և ողորմելի մեղաւորներս հաւատով կխոստովանիմք, որ առանց Աստուծոյ շնորհաց ինքնին բարի գործել կարող չեմք: Ապրելով ըստ կանոնաց հաւատոյ՝ մեք պարտաւոր ենք լինել ճշմարտասէր և առաքինադործ. պէտք չէ առնումք օրինակ մեզ մեղաւորներու, որոնք ապրումեն իրենց մոլորեալ սրտից զգայական կրից ձգտմամբ. թող Աստուծոյ խօսքը լուսաւոր ջահ լինի մեր բոլոր կենաց ընթացքումը:

Մեք՝ որպէս Աստուծոյ ստեղծուած՝ պարտաւոր ենք ծառայել նմա և կատարել նորա կամքը, ուրանալով մեր անձը նոյն իսկ այն ժամանակ՝ եթէ խոստացած ևս չլինէր յաւիտենական վարձը իրեն ծառայողներին. ըստ որում ծառայել Աստուծոյ՝ աղատութիւն է և փրկութիւն, իսկ մեղաց մէջ ընկնիլ՝ զերութիւն է և կորուստ:

Մեք պէտք չէ հետեւիմք մեր սեպհական կամաց թեղադրութեան, այլ ապաստանել Աստուծոյ կամաց թէ՛ բազմաւոր և թէ՛ անբաղաժ հանգամանաց, թէ՛ թշուառութեան և թէ՛ չարչարանաց, երկիւղի և ազքա-

տուլթեան մէջ : Բոլոր մեր հոգսը յանձնենք Աստուծոյն, ըստ որում 'Նա է' որ կը հոգայ մեզ համար : Ինչ բարութիւն որ կանեն մեզ մարդիկ, այն ամենը Աստուծոյ զործն է. նոքա իբրեւ զործիք են Աստուծոյ ամենակարողութեան և նախախնամութեան : Պարտ է ըստ կարի զգուշանալ ախտաւորաց հետ բարեկամ լինելէն, բայց աշխատիլ՝ եթէ հանգամանքները ներեն՝ զանոնք ուղղելու համար :

Աստուծոյ ներկայութեան մտածութիւնը և ամենախորին ջերմեռանդութեան ըզգացմունքը առ Աստուած ամեն ժամանակ մեր զործոց ուղղելը պէտք է լինի, իսկ մեր հոգին զգածուած պիտի լինի սիրով և շնորհակալութեամբ առ Աստուած : Պէտք չէ զերի լինել կոյր ցանկութեանց, այլ խելքն ու խիղճը պէտք է կառավարեն մեր մտքերը, ցանկութիւնները, խօսքերը և զործքերը : Աստուած պահպանէ մեզ նորանից՝ որ մեք անբաւական լինիմք նորա բարերարութիւնից, կամ անկատար կերպով յանձնուած լինիմք աստուածային կամաց :

Քրիստոնէական առաքինութիւնը ոչ միայն պէտք է փախչի մեծ մեղքերէ, և կատարէ մի քանի բարեգործութիւններ, այլ մեք պարտաւոր ենք մեր մտաց և վարուց մէջ պահպանել բոլոր Աւետարանական խրատները, որոց նպատակն է մեր բարեբաղտութիւնը : Որչափ մարդիկ քիչ կը հասկանան առաքինութեան արժանաւորութիւնը, զոր պարտաւոր են ձեռք բերել որպէս քրիստոնեաներ, և որչափ սակաւ սորա վերայ մտածումեն : Ամեն պարտաւորութիւն՝ Աւետարանի սովորեցուցածին նայելով՝ մեզ համար սուրբ պէտք է

լինի ամեն ժամանակ և ամեն փորձութեանց մէջ : Մեք պէտք է աշխատիմք աննալ Աստուծոյ առջեւ բարի խիղճ՝ այնպիսի հոգատարութեամբ, որ կարողանամք բարի օրինակ լինել ընկերին. պէտք է աշխատիմք բարի զործքեր անել, զոր մարդկային աչքը միշտ տեսնել կարող չէ, և այնպիսի անկեղծութեամբ՝ որպէս թէ բոլոր աշխարհ մեզ վերայ կը նայի. մեք պարտաւոր ենք անմեղ սիրտը այնքան հարկաւոր համարել՝ որչափ հարկաւոր է ունենալ ճշմարիտ դատապարտութենէ ազատ մէկ կենցաղավարութիւն : Բայց բաւական չէ վեր ի վերոյ կատարել քանի մի պարտաւորութիւնները, այլ ամենը անթերի կերպով : Քրիստոնէական առաքինութիւնը պէտք է մաքուր լինի իւր աղբերակին մէջ, անմեղ իւր զործողութեանց մէջ : 'Նա կըբղի ի սիրոյ և ի ջերմեռանդութենէ առ Աստուած : 'Նա բան մի չաներ ունայնութեան, շահասիրութեան համար, կամ առ հարկի : Աստուծոյ կամքը նորա համար օրէնք պէտք է լինի, և զայն ճանչցածին պէս ուրիշ զրգիւ պիտի չունենայ, ինքնասիրութեան և կրից բողոքները պէտք է լուեն : Քրիստոնէական առաքինութիւնը ոչ միայն մաքուր է իւր աղբերակին մէջ, անմեղ իւր զործողութեանց մէջ, այլ և անսասան իւր զործառնութիւնքը և մտադրութիւնը կատարելուն մէջ. ոչինչ բան կարող չէ զայն զաղարեցնել՝ ոչ ծանր աշխատանքը, ոչ արգելք և ոչ կորուստը : Անկախ լինելով կարծիքներէ և աշխարհի անտեղի դատողութիւններէ, ամեն ժամանակ կը հետեի իւր ուղիղ կանոնաց : Մարդկանց որպիսի և իցէ ծաղրածութիւնը չեն կարող զինքը

մղել ի խանդարումն պարտուց խղճի: Արքան ևս փոփոխուի մտադրութիւնն ու ժամանակի ողին, նա յաւէտ միատեսակ է թէ բաղդաւորութեան և թէ անբաղտութեան մէջ, առանձնութեան և ընկերութեան մէջ, փորձութեանը մէջ և երբ փորձութիւնը իրմէն հեռացած է: Թէև սակաւք կհետեւին արդարութեան ճանապարհով, սակայն առաքինին զայն չի թողուր, այլ անխոտոր կրնթանայ նորա վերայ յաւիտենականութեան հասնելու դիտաւորութեամբ:

Անտարբերութիւնը դէպ ի առաքինութիւնն բարոյականութեան համար սաստիկ վտանգաւոր բան է: Անտարբերը առ բարին կիսով չափ միայն կը կատարէ իւր պարտքերը, և այն ևս ծուլութեամբ. ոչինչ բարի բան չի կատարեր ճշմարտութեամբ և ջերմեռանդութեամբ, չի ցուցներ դէպ ի այն ուրախութիւն և յոժարութիւն, որք հետեանք են ջերմեռանդութեան և սիրոյ առ Աստուած: Ան միշտ թոյլ ձգտումն ունի դէպ ի առաքինութիւնը, կզանգատի անդադար պարտուց ծանրութեան և անախորժ լինելուն վերայ, չգիտէ ի փորձոյ Քրիստոսի խօսքին ճշմարտութիւնը, թէ՛ «Իմ լուծը քաղցր է և բեռն դիւրատար»: Այսու ամենայնիւ սակաւ են իրենք զիրենք մեղադրողները իւրեանց սառնութեան մէջ, դէպ ի առաքինութիւն: Այս բանը յառաջ կգայ կամ նորանից՝ որ չեն նշմարում իրենց մէջ այն սառնութիւնը, և կամ մտածումն թէ՛ աննշան մեղք մի է: Բայց մի՞թէ միայն այն հիւանդութիւնը վտանգաւոր է՝ որ փութով կկարծէ մարդոյ կեանքը, իսկ այն հիւանդութիւնը վտանգաւոր չէ՞՝ որ սա-

կաւ առ սակաւ և ծածուկ կվնասէ նորա զօրութեան: Անտարբերութիւնը զմարդը կձգէ, յետին չքաւորութեան մէջ: Առաքինութիւնը ունի իւր դժուարութիւնները, բայց որպէս զինքն չնեղացնեն դմեզ, պէտք է զանոնք ընդունել աներկիւղ և ուրախ սրտիւ, և թեթեւցնել զանոնք մեր ջերմեռանդութեամբ, ապա թէ ոչ՝ կը կրեմք զանոնք իբր յակամայից մեր վերայ դրուած ծանրութիւն: Անտարբեր մարդը կ'զգայ լծոյ ծանրութիւնը, բայց չզգար զայն թեթեւացնող զուարճութիւնը, զոր աստուածավախը ինքեան իբրև ուրախութիւն և մխիթարութիւն կվերադրէ: Ան իմանումէ, որ Աստուծոյ ճշմարիտ երկիւղը՝ մաքուր աղբիւր է անդորրութեան և զուարճութեան՝ ինչպէս որ կսովորեցնէ հաւատքը: Բայց անտարբեր մարդը այս երկութեն ևս մի ճաշակ չառնուր. վասն զի միշտ պէտք է պատերազմի ատելութեան և սրտնեղութեան հետ: Աստի յառաջ կգայ նորա անհաստատամտութիւնը: Այս պիտի դրութիւնը ոչ ապաքէն թշուառագոյն և անբաղդութեան ծայրն է: Այլ արդարև մեղք է կերպով մի զգուիլն և ընդ նմին միտումն առ երկիւղն Աստուծոյ՝ չը փախչելով՝ ինչպէս որ հարկն է առաջնից, և անձնատուր չլինելով երկրորդին, երբիլ այս երկութին ընտրութեան մէջ՝ առանց ընդունելոյ մէկ հաստատ և վճռողական նպատակի, չէ՞ որ այսպիսի դրութիւնը տանջանք է: Այն ապաքէն հարկաւոր է ազատիլ նոցանից՝ գործ դնելով բոլոր ձեռքը, զարթեցնելով իւր մէջ գործունեայ կամք մի զիմելոյ դէպ ի անվթար անդորրութիւն սրտի, որ պարգև է ջերմեռանդութեան և անխոնջ յառաջադիմութեան

կատարելութեան ծանապարհի վերայ :
 Մեր մեծազոյն անհոգութեան մէք ինքնե-
 րըս եմք պատճառ, որ թեթեւ գործը մեզ
 համար կոժուարանայ : Սուրբ Ասկերերանը
 կասէ. « Ծոյլ մարդոյ ամենայն ինչ ծանր
 կթուի » : Քաջասիրտը չժախնար նոյն իսկ
 անմեքնեալի բարձրաւանդակներէց, նա
 աւելի քաջութիւն կցուցնէ մեծամեծ փոր-
 ճանքներին՝ քան թէ անտարբերը թեթեւ
 դորձառնութեանց մէջ, ըստ որում չկայ
 թեթեւ բան մի՝ որ չյողնեցնէ ծոյլին, ինչ-
 պէս որ չկայ ոչինչ զժուար և ծանր բան՝ զոր
 կամակարսէրը չյողթէ : Անտարբերութիւ-
 նը մերձաւոր քայլ է դէպ ի ոճրագործու-
 թիւն : Առջի բերան աշխատումէք նուի-
 րել մեր անձը կրկն այնքան, որքան որ առաքինութենէն՝ որ մեզ համար մեծ ար-
 ժողութիւն մի չունի, խել կարող եմք :
 Անանձ կիրքերը ծածուկ մեծացնումեն
 իւրեանց զօրութիւնը և վերջապէս յաղ-
 թումեն բարի դիտաւորութիւններին, ու-
 նենալով ինքեանց պաշտպան միմիայն ան-
 տարբերութիւնը : Ամեն մեծ յանցանաց
 աղբիւրը անհոգութիւնն է. մտադրութեան
 պակասութիւնը դէպ ի աննշան մեղքերը,
 զորս առ հասարակ միայնելով քիչ գործա-
 դրուած առաքինութեանց հետ, զոր շատ
 անգամ թեթեամտութեամբ թողում ենք
 կամ միայն հարեանցի կերպով կատարում
 ենք : Անդ նմին աշխատումէք հանդար-
 տեցնել մեզ նորանով, որ նորէն զգուշա-
 նամք ծանր մեղքերից, և եթէ փորձու-
 թիւնները կարողանան աւելի զօրաւոր լի-
 նել, բաւական զօրութիւն և խելք ունիմք
 նորան հակառակելու համար : Բայց որ-
 քան խտրվում ենք : . . . Ատումենք
 փոքրիկ անխառնութիւնը, որ մեր պարտա-

ւորութեան և ձեռնարկութեան դէմ կղած
 է, չեմք յարգում խղճի նախազգուշու-
 թիւնը չարին համախոհութենէ, յորում
 մերձաւոր փորձանք մի զեռ չկայ, բայց սր-
 տի մէջ տեղ բրած են շահասիրութիւնը,
 անխառնութիւնը ու շոյլութիւնը :

Արկնուած սխալմունքը սովորութիւն կը-
 դառնայ : Խղճի զգայութիւնները կը թու-
 լանան, հակամիտութիւնները կը լինին ա-
 ւելի սաստիկ և զօրաւոր, և մեր ահեկա-
 լութեան հակառակ կքարշեն զմեզ իրենց
 հետ : Աթէ չարութիւնը ի սկզբան անդ ե-
 րեւնար մեզ բացայայտ կերպով, և եթէ
 յայնուած ժամանակը իմացընէր մեզ իւր
 զարհուրելի հեռեանքները, յայնժամ
 անձնատուր չէինք լիներ ծոյլ թմրութեան,
 որ մեզ խոչընդոտն կլնի նկատել՝ թէ ամեն
 առաքինութեան կորուստը սակաւ առ սա-
 կաւ և ի ծածուկ կյառաջանայ : Անդ նը-
 մին մեր պարտաւորութիւնքը չկատարին
 անզգալի կերպով կձգէ մեզ մէկ մեղքից
 միւսին մէջ. վերջապէս մեղք գործելու
 անողոյշ սովորութենէ՝ մեր հողոյ ախրա-
 պետութիւնը անդառնալի կերպով կը կոր-
 սուի : Ահ, եթէ ամեն մարդ երկրիս վերայ,
 իւրաքանչիւրը իւր գիտցածին պէս կատա-
 րէր իւր վերայ դրուած պարտաւորութիւն-
 ները, ոմանք որպէս մեծաւորք՝ այլք որ-
 պէս ստորադրեալք, ոմանք որպէս ծնողք՝
 այլք որպէս զաւակք, ոմանք որպէս հա-
 րուստք՝ այլք որպէս աղքատք, ամենքը
 որպէս առաքինիք և աշխատասէրք, և
 այլն, յայնժամ որպիսի կարգ, խողա-
 ղութիւն և բազմաւորութիւն կթաղաւոր-
 էր նոցա մէջ : Այ մի ծառայութիւն, որ
 մինը միւսին կարող է մատուցանել, չէր
 լինէր նոցա համար ծանր բան, ոչ մի աղ-

քառ ի զուր չէր խնդրէր օժանդակութիւն, ոչ մի մարդ չէր լինէր ուրիշ նկատմամբ իրրեւ օտար. ոչ որ չէր վարուէր միւսին հետ դաժանաբար և կասկածանօք. ոչ որ չէր լինէր արգելք ուրիշների հանգստութեան և զուարճութեան, ոչ որ չէր առաջնորդէր իւր ընկերին դէպ ի չարք, և ամենքը զինքեանս կհամարէին մի հօր զաւակներ: Աւ այսպէսով կկատարուէր Վրիստոսի կամքը: Մարդկային բարութեան համար նա նուիրեց բոլոր իւր զօրութիւնը, բոլոր կարողութիւնը և մինչև անդամ իւր կեանքը: 'Նոյն կերպով պէտք է վարուի այն քրիստոնեայն՝ որ կցանկայ նորան հետեւիլ: Մեր ոչ մի աշխատանքը, ոչ մի ծառայութիւնը, ոչ մի բարեգործութիւնը չի կորսուիր եթէ այլոց օգտակար են՝ թէ և մեզ համար լինին անօգուտ: Բարի գործը որքան անշահասիրաբար լինի, այնքան աւելի է նորա արժանաւորութիւնը Աստուծոյ առաջ, այնչափ ևս նշանաւոր է նորա վարձատրութիւնը յապագային:

Ավ քրիստոնեայ, կտեսնենք արդեօք այս պատկերին մէջ քո առաքինութիւնը: Եթէ ոչ, ի՞նչ արդելք է լինում քեզ թողնել անհոգութիւնն ու ծուլութիւնը, որոնք չեն թողում զքեզ լինել այնպէս, ինչպէս որ հարկն է քեզ լինել Աւետարանի ուսմամբն ու կանոններովը: Աշխատի՛ր յազմել այս ֆնասակար անտարբերութեան դէպ ի առաքինութիւնը: Չէ՞ որ թելթեւամտութիւն է ամեն ժամանակ տատանիլ մեզայն սահմաններում՝ այսօր ընդունելով հաստատուն կամք առաքինի լինելու, իսկ վաղն մոռանալով զայն: Մի՞թէ չգար այն օրը, յորում զու ջերմեւանդ լինիս այն

ամեն բանի համար, որ կվերաբերի բարեպաշտութեան և առաքինութեան: Վրիստոնիայի հոգի, անկեղծօրէն մտածէ այս բանի վերայ:

Թարգմանեաց

ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱՄԵԼԻԲԵԱՆՅ.

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՄՈՎՍԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՅ.

Երեւանայ Նորք թաղի Հայոց Ս. Սիմէօն եկեղեցւոյ գաւթում՝ ի պէտս դատաւարակութեան օրիորդաց Հայոց տեղւոյն՝ իւր սեփական արդեամբք եւ ծախքով ծխ. դպրոց հիմնել ու կառուցանել ըղձալով եւ ուխտելով Նորքեցի Մեծարգոյ Պ. Մովսէս Յարութիւնեանց ի յիշատակ բարի կողակցւոյն իւրոյ հանգուցելոյ ի Տէր, — Վեհ. Հայրապետի օրհնութեան Կոնդակին արժանացաւ, եւ շինութեան սկզբնաւորութեան եւ այլոց համար եւս կարեւոր հրահանգ եւ հրամանը պատուիրեցաւ Թեմ. Ատենին Երեւանայ:

Այսպիսի մի բարեգործութեան վստմութիւնը եւ գոյնետը ուխտիւք մտադրեալ նպատակի կատարման եւ արդիւնաւորութեան մէջ աւելի փայլելով, կսիրեմք յուսալ՝ զի յիշեալ Պ. Յարութիւնեանց ջերմեւանդ ազգայինն մեր կջանայ ընդ փոյթ իրագործել իւր ուխտը, զոր եւ ի գլուխ տանելով ըստ արժանւոյն՝ ի ժամանակին դպրոցի շինութեան աւարտման եւ բացման՝ ինչ-